## ՔԱՌՕՐՅԱ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 9-12-ը Հայ Առաքելական Եկեղեցու երիտասարդական կենտրոնը», ղեկավարությամբ Սուրեն սրկ. Գևորգյանի, կազմակերպել էր քառօրյա ուխտագնացություն Հայաստանի զանազան թեմեր և պատմական սրբավայրեր: Ուխտագնացությանը մասնակցում էին շուրջ երկու հարյուր ուսանողներ Հայաստանի շուրջ 10 բարձրագույն ուսումնական հաստատություններից:

Ուխտավորները հոգևորականների առաջնորդությամբ այցելեցին Նորավանք, Խոր Վիրապի վանք, Ծաղկեվանք, եղան Գյումրու Յոթվերք և Մուղնու Ս. Գևորգ եկեղեցիներում, Վահրամաբերդում և Ամբերդում:

Այցի ընթացքում եկեղեցիներում և վանքերում երիտասարդները մասնակցեցին ժամերգություններին: Ուսանողների համար կազմակերպվեցին նաև հոգևոր զրույցներ և մշակութային տարբեր միջոցառումներ:

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՋԵՐՄՈՒԿԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԳՆԴԵՎԱՆՔ

Մայիսի 23-ին Հայ Առաքելական Եկեղեցու երիտասարդական կենտրոնը, ղեկավարությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Սուրեն սրկ. Գևորգյանի, կազմակերպել էր ուխտագնացություն Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցի և Գնդեվանք, որին մասնակցում էին շուրջ 30 ուսանողներ Հայաստանի հինգ բարձրագույն ուսումնական հաստատություններից: Ուխտագնացությունն սկսվեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցուց, ուր երիտասարդներն աղոթեցին ճանապարհ ընկնելուց առաջ՝ հայցելով Սուրբ Գրիգորի բարեխոսությունն ու հովանավորությունը:

Ուխտավոր երիտասարդներն սկզբում այցելեցին Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցի, ուր մասնակցեցին միասնական աղոթքին, այնուհետև ոտքով շարժվեցին 10-րդ դարում հիմնադրված Գնդեվանք, ուր Սուրեն սրկ. Գևորգյանը ուխտավորներին ներկայացրեց վանքի պատմությունը և խոսեց քրիստոնյայի կյանքում աղոթքի նշանակության մասին:

Այնուհետև Վայոց ձորի «Գիտելիք» համալսարանում ուխտավորներին դիմավորեց և իր օրհնությունը բաշխեց Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը: Սրբազան Հայրն իր խոսքում անդրադարձավ թեմի գործունեությանը՝ ընդգծելով նմանատիպ ուխտագնացությունների կարևորությունը երիտասարդների շրջանում: Ուխտավորները հանդիպեցին և զրուցեցին համալսարանի ուսանողների հետ: Երկուստեք կարևորվեց նմանատիպ հանդիպումների կազմակերպումը և շփումը տարբեր բուհերի ուսանողների միջև:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*